ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- թ. N__-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն

ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 21-րդ կետի 3-րդ նախադասության վերջում, «եզրակացությունները» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «, ընդ որում Քաղաքապետը իր եզրակացությունը կայացնում է քաղաքապետարանի աշխատակազմից ստացած կարծիքների հիման վրա»:
2) 22.1 կետում «գլխադասային հանձնաժողովի» բառերից հետո լրացնել «նախնական» բառը:
3) 37-րդ կետում «հնարավոր սեղմ ժամկետում» բառերը փոխարինել «երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:
4) 38-րդ կետը հանել:
5) Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի այն կետերում որտեղ նշված է «սեփականություն համարվող» բառակապակցությունները փոխարինել «սեփականություն հանդիսացող» բառակապակցությամբ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 21-րդ կետում լրացում կատարելու առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավելի պարզ դառնա քաղաքապետի կողմից նախաձեռնությունների վերաբերյալ եզրակացություն տալու հիմքերը և ընթացակարգը: Սույն լրացումը կոչված է նաև ապահովելու քաղաքապետի կողմից ներկայացվող նախաձեռնությունների վերաբերյալ տրվող եզրակացությունների օբյեկտիվությունը և հավասարությունը ավագանու անդամների և խմբակցությունների կողմից ներկայացվող նախաձեռնությունների նկատմամբ:

Նախագծով Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 22.1-րդ կետում լրացում կատարելու առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը տվյալ պահին չի կարող համարվել կամ լինել վերջնական:

Նախագծով Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 37-րդ կետում փոփոխություն կատարելու առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «սեղմ ժամկետ» հասկացությունը կրում է սուբյեկտիվ բնույթ և կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ:

Նախագծով Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 38-րդ կետը հանելու առաջարկությունը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ ՀՀ Սահմանադրության մեջ այդպիսի արտոնություն ավագանու անդամին տրված չէ: Բացի այդ այս սկզբունքը Երևան քաղաքի ավագանու անդամին դնում է արտոնյալ պայմանների մեջ ՀՀ մյուս համայնքների ավագանու անդամների նկատմամբ: Միաժամանակ, քանի որ վերջին տարիների ընթացքում որոշ քրեորեն պատժելի, մասնավորապես անձնական վիրավորանքի և զրպարտության հետ կապված արարքներ ապաքրեկանացվել են և այլևս դրանց մասով օրենսդրությամբ նախատեսվում է վարչական պատասխանատվություն, ուստի Երևան քաղաքի ավագանու անդամի կողմից իր լրազորությունների իրականացման ընթացքում նման արարք կատարելու դեպքում, այն կարող է մնալ անպատիժ, քանի որ քրեորեն պատժելի արարք չէ, այլ վարչական իրավախախտում է:

Նախագծով արված հետևյալ առաջարկությունը՝ Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի այն կետերում, որտեղ առկա է «սեփականություն համարվող» բառակապակցությունը փոխարինել «սեփականություն հանդիսացող» բառակապակցությամբ, պայմանավորված է զուտ «համարվող» և «հանդիսացող» բառերի իմաստային տարբերությամբ, քանզի «սեփականությունը» **հանդիսանում է**, այլ ոչ թե **համարվում է** այս կամ այն անձի (սուբյեկտի) սեփականությունը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն նախատեսվում:

ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ